

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/103

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 03.11.2021թ.

Շտկված բողոքի ամսաթիվը՝ 08.11.2021թ.

Բողոք բերող անձ՝ <<Գեո-Նալ>> ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ԳԱԱ <<Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ>> ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ <<ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04>> գնանշման հարցում

Գնման առարկան՝ մշտապես գործող ռեֆերենց կայանների GNSS ընդունիչի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. պարտավորեցնել <<ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու <<ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04>> ծածկարով ընթացակարգը,

2. հետագայում նոր մրցույթ հրավիրելու դեպքում՝ հանել մրցակցային անհավասարություն առաջացնող սահմանափակումները:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ**

Նիստերին կարելի է առցանց հետևել <https://www.e-gov.am/gnumner/> հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքների քննող անձին

«Գեո-Նալ» ՍՊԸ/ՀՎՀՀ 00062594/

Հասցեն - ՀՀ, ք. Երևան, Խանջյան 13, տարածք 2

Տնօրեն՝ Աննա Նալչյան, Անձնագիր/ AS0657178, 17.06.2019, 009/

091000310, info@geonail.am

Պատվիրատու - ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և
ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ

Պատվիրատուի հասցեն- Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սազայան 5

Գնման ընթացակարգի ծածկագիրը- ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04

Վեճի առարկան

«ՀՀ ԳԱԱ Ա. ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ և ԻՆՋԵՆԵՐԱՅԻՆ ՍԵՅՍՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ «ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՈՒՖԵՐԵՆՆՑ ԿԱՅԱՆՆԵՐԻ GNSS ԸՆԴՈՒՆԻՉ»-ի ձեռքբերումը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

2021-10-27թ ջnumner.am կայքում հրապարակվում է ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և
ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար Մշտապես գործող ռեֆերենց
կայանների ընդունիչի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով
ընթացակարգի հայտարարությունն և հրավերը: Վերոհիշյալ հրավերի հայտարարության տեխնիկական
ընթացակարգով պահանջվող պարամետրերի մասնագիտական ուսումնասիրությունը, մեր մասնագետներին թույլ է
տվել գալ այն եզրահանգմանը, որ հրավերի տեխնիկական ընթացագիրը կազմված է սուբեկտիվորեն՝ կոնկրետ
արտադրողի, կոնկրետ գործիքի պարամետրերին համապատասխան: Պատվիրատուն ակնհայտ կերպով
սահմանափակել է հավասար մրցակցային պայմաններ բոլոր մասնակիցների համար՝ բացառելով ոլորտի այլ
ներակայացուցիչների մասնակցությունը: Ցանկանում ենք անդրադառնալ տեխնիկական ընթացագրում առկա
պահանջներին՝

Չափաբաժին 1: Նավիգացիայի և տեղանքի որոշման գլոբալ համակարգեր (gps կամ համարժեք)

Մասնավորապես ցիտում ենք հրավերում ներկայացրած տեխնիկական պահանջները առանց խմբագրման.
/ Ընդունիչը պետք է ունենա առնվազն 600 ալիք, պետք է կարողանա միաժամանակ հետևել բոլոր
արբանյակներից եկող առկա ազդանշաններին՝ այդ թվում նաև այն արբանյակային ազդանշաններին,
որոնք մակնշված են որպես ՎԱՏ, պետք է կարողանա արբանյակներին հետևել 0 աստիճան բարձրության
անկյան տակ, պետք է ունենա բավարար քանակով ֆիզիկական և անկախ ալիքներ, որպեսզի կարողանա
ընդունել բոլոր պահանջված ազդանշանները:/

և

/ Ընդունիչը պետք է աջակցի դիրքի և կարգավիճակի ներմուծման ու արտահանման մասին ինֆորմացիան
NMEA-0183 արձանագրության միջոցով, պետք է ապահովի տվյալների ելք մինչև 100 Hz
հաճախականությամբ, պետք է ապահովի մեկ պոլս մեկ վայրկյանում (PPS) ելք, պետք է ապահովի
արտաքին իրադարձությունների ներմուծում, պետք է աջակցի արտաքին օդերևութաբանական կայաններ
ու թեքության սենսորներ:/

Վերոնշյալ երկու պահանջները միաժամանակ կարող է բավարարել միայն մեկ սարք՝ Trimble Alloy GNSS
Reference Receiver-ը, որի տեխնիկական ընթացագիրն էլ հիմք է հանդիսացել ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04 ծածկագրով
ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական ընթացագրի համար:

Բողոքի պահանջը.

Ելնելով մեր կողմից ներկայացված ապացույցներից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Հոդված 13-ի, 2-րդ մասի 1 և 2 կետերով՝ խնդրում ենք.

1 Պարտավորեցնել ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04 ծակագրով գնման ընթացակարգը:

2 Հետագայում նոր մրցույթ հրավիրելու դեպքում՝ հանել մրցակցային անհավասարություն առաջացնող սահմանափակումները:

Կից ներկայացնում եմ

1. Վճարման անդորրագիրը

«Գեո-Նալ» ՍՊԸ տնօրեն՝

03 նոյեմբեր 2021թ

Digitally signed by NALJYAN ANVA
6707750453
Date: 2021.11.03 10:25:27 AMT